Զագավանք

Զագավանքը (Գետարգելի Ս. Նշան) գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Առինջ գյուղից 2 կմ հարավ-արևելք, բլրի լանջին:
Հիմնադրվել է վաղ միջնադարում, վանքի հնագույն եկեղեցին VII դ. կառույցներից է: Զագավանքը նշանավոր կրոնական կենտրոն և հայտնի ուխտատեղի է դարձել, երբ 1293-ին Գրիգոր Է Անավարզեցին վանքին նվիրել է Գետարգելի Ս. Նշանը՝ Հռոմի Սեղբեստրոս պատրիարքի՝ Ս. Գրիգոր Լուսավորչին տված Քրիստոսի խաչափայտի մասունքը, որով, ըստ ավանդության, Պետրոս Ա Գետադարձը 1022-ին, Բյուզանդիայի կայսր Վասիլ II-ի ներկայությամբ, Տրապիզոնում Զրօրինեքի տոնին քաղաքի միջով անցնող գետը կանգնեցրել է (այստեղից էլ՝ Գետադարձ և Գետարգել անունները): Զագավանքում 1293-ին, Ս. Նշանը պահելու համար կառուցել են երկհարկանի գմբեթավոր եկեղեցի, որից պահպանվել է առաջին հարկը:
Զագավանքն ավերվել է 1679-ի երկրաշարժից՝ մնալով, սակայն, մինչև XX դ.՝ որպես գործող վանք, ունենալով բազմաթիվ կալվածքներ, ջրաղացներ, Երևանում՝ այգիներ: Գետարգելի ս. Նշանն այժմ գտնվում է Էջմիածնում, և մյուռոնօրհնության ժամանակ կաթողիկոսը առաջինը նրանով է օրհնում Ս. Մյուռոնը: Գետարգելի Ս. Նշանի տոնը կատարվում է գարնանը՝ Ս. Զատկի հաջորդ կիրակին: